# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **26 մարտի 2026թ.**

2026թ. մարտի 6-26-ը ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

| | |
|---|---|
| Ե. Մարտիրոսյան՝ | Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալի օգնական, |
| Դ. Ալեքսանյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, |
| Լ. Մուրադյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Տ. Իգրյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության առաջատար մասնագետ, |
| Է. Մարտիրոսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ե. Մարտիրոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի Մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված Մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մարտի 6-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 16:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի 1-ին փողոց 2-րդ նրբանցքի , 7-րդ փողոց 1-ին նրբանցքի և 21-րդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | 750,000.00 |
| 2-րդ | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամասի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | 700,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/25 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Բլյու Ստրիմ Սոլուշնս» ՍՊԸ | ք. Երևան, Նոր Նորք ՎԶ, Լվովյան 3/6 | +374 55 721728 | bluestream2018@gmail.com | 00910183 |
| 2 | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Բոշնաղյան փող. 1նրբ. տուն 8 | +374 91 916267 | globalengineerllc@gmail.com | 08419558 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

«ԲԼՅՈՒ ՍԹՐԻՄ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- հայտով ներկայացված դիմում-հայտարարություն փաստաթղթում Ընթացակարգի հրավերով սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է 2025 թվականի վերաբերյալ, սակայն պետք է լինի 2026 թվականի համար:
- Բացակայում է սույն գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.4 կետի 1)-ին ենթակետով սահմանված և պահանջվող պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հարկային հաշվի և հաշիվ վավերագրի պատճենները:
- Բացակայում է սույն գնման ընթացակարգի 2.4 կետի 3)-ին ենթակետով և Հավելված 1.1-ով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին բավարարելու մասին կցված փաստաթուղթը, մասնավորապես՝ Տեղեկանք մասնակցի բանկային հաշվի/հաշիվների/ մնացորդի վերաբերյալ կամ քաղվածք բանկային հաշվից/հաշիվներից/ հայտը ներկայացնելու կամ դրան նախորդող օրվա դրությամբ:
- Բացակայում է սույն գնման ընթացակարգի 2.4 կետի 4-րդ ենթակետով պահանջվող մասնագետների էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին փաստաթուղթը:

«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- հայտով ներկայացված դիմում-հայտարարություն փաստաթղթում Ընթացակարգի հրավերով սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է 2025 թվականի վերաբերյալ, սակայն պետք է լինի 2026
- սույն գնման ընթացակարգի 2.4 կետի 4-րդ ենթակետով պահանջվող մասնագետի գրավոր համաձայնության փաստաթուղթը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու վերաբերյալ, հաստատված չէ տվյալ մասնագետի էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ և ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | Մասնակցի անվանում | Գնման հայտով | Մասնակիցների առաջարկած գները |
|---|---|---|---|

| չ/հ | անվանումը | | սահմանված գնման գին | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1-ին | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի 1-ին փողոց 2-րդ նրբանցքի , 7-րդ փողոց 1-ին նրբանցքի և 21-րդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ | 750000 | 545000 | 0 | 545000 |
| | | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | 750000 | 495000 | 0 | 495000 |
| 2-րդ | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 3-րդ թաղամասի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ | 700000 | 370000 | 0 | 370000 |
| | | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | 700000 | 340000 | 0 | 340000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 23-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները, նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցելով առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանություն/ներ/ը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 25-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, իսկ «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.10 կետերով սահմանված պահանջներով՝ «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ **«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-2րդ | «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ | բավարար |
| | «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ | X | 545000 |
| 2-րդ | «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ | X | 370000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. մարտի 26-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովին ներկայացրեց Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/հայտարարությունների տեքստերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/հայտարարությունների տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ե. Մարտիրոսյան ________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Դ. Ալեքսանյան ________

Լ. Մուրադյան ________

Տ. Իգոյան ________

Է. Մարտիրոսյան ________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ________